

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29.10.2014 07:12

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ Փաստաբանների պալատ) կիսում է ՀՀ կառավարության կողմից ՀՀ ԱԺ քննարկմանը ներկայացված ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հասարակության մտահոգությունը:

Փաստաբանների պալատը հարցին մոտենում է ոչ միայն այն տեսանկյունից, որ նշված օրենքի նախագիծը կարող է վատթարացնել փաստաբանների պալատի անդամ կին փաստաբանների սոցիալական վիճակը, այլ առհասարակ, այն կարող է Հայաստանի Հանրապետությունում մայրության և ծննդաբերության խթանմանը լուրջ խոչընդոտ հանդիսանալ, անկախ այն հանգամանքից, որ նախագծով նախատեսված է մայրության նպաստ սահմանել նաև չաշխատող կանանց համար: Ընդ որում, ստորև ներկայացված դիտարկումները հիմնված են բացառապես իրավական վերլուծությունների վրա:

Հարկ է առանձնացնել օրենքի նախագծով առաջարկվող այն հիմնական փոփոխությունները, որոնք էականորեն վատթարացնում են կանանց իրավական վիճակն ի համեմատ գործող իրավակարգավորման.

1. Նախագիծը նախատեսում է, որ նախաճննդյան և հետճննդյան (մայրության) նպաստի չափը կախված է լինելու վերջին աշխատավայրում կնոջ աշխատանքի ստաժից, ընդ որում մինչև 1 տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ միջին աշխատավարձի 40%, 1-ից 3 տարվա դեպքում՝ 60%, 3 տարուց ավելին՝ 80%: Մինչդեռ գործող օրենսդրությունը անկախ ստաժից նպաստի չափ է սահմանել միջին աշխատավարձի 100%-ը:
2. Նախագծով սահմանվում է մայրության նպաստի վերին շեմ, ինչը բացակայում է գործող օրենսդրությամբ:
3. Նախագծով երեխայի խնամքի համար նախատեսված 18.000 ՀՀ դրամ նպաստը կտրամադրվի մինչ երեխայի 1 տարին լրանալը, մինչդեռ գործող օրենսդրությամբ այն տրամադրվում է մինչև երեխայի 2 տարին լրանալը:
4. Նախագծով քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալին մայրության նպաստ չի նշանակվում, մինչդեռ գործող օրենսդրությամբ նման սահմանափակում առկա չէ:


Վերը նշված փոփոխությունների վերաբերյալ Փաստաբանների պալատի դիտարկումները.

- ա. Գտնում ենք, որ նախաճննդյան և հետճննդյան (մայրության) նպաստի չափը նույն գործատուի մոտ աշխատանքային ստաժից կախվածության մեջ դնելը կհակասի կնոջ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածով ամրագրված աշխատանքի ընտրության ազատությանը, մի պարզ պատճառով, քանի որ կինը հղիության դեպքում ստիպված է լինելու չփոխել աշխատավայրը աշխատանքային ստաժը պահպանելու և ավելի բարձր հղիության նպաստ ստանալու տեսանկյունից, անկախ նրանից, որ նախատեսվելիք նոր աշխատատեղը կարող է ավելի բարենպաստ լինել կնոջ համար՝ թե աշխատավարձի և թե առաջխաղացման տեսանկյունից.
- բ. Անձը, որը նոր աշխատատեղում ունի մեկ տարուց պակաս աշխատանքային ստաժ (անկախ նախորդ աշխատատեղում աշխատանքային ստաժի առկայության) սովորական պայմաններում կարող է ստանալ նույն չափի մայրության նպաստ, ինչը նախագծի համաձայն կստանա չաշխատող կինը, ինչը կարծում ենք արդարացի չէ նաև այն պատճառով, որ եկամտային հարկ վճարող անձը չի կարող նույն նպաստը ստանալ ինչ նման հարկ ընդհանրապես չվճարողը:
- գ. Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիայի 8-րդ կետի համաձայն՝ աշխատող կանայք մայրության դեպքում հատուկ պաշտպանվածության իրավունք ունեն, իսկ խարտիայի 8-րդ հոդվածի ուժով անդամ պետությունները պետք է վերջիններիս տրամադրեն վարձատրվող արձակուրդ: Ընդ որում, ԵՄ մոտեցումն այս հարցում այն է, որ վճարովի արձակուրդի չափը պետք է հնարավորինս մոտ լինի կնոջ կողմից ստացվող աշխատավարձին: Մինչդեռ նման

փոփոխությամբ պետությունը փաստորեն հետ քայլ է կատարում իր կողմից վավերացված միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումից:
 դ. Ազատագրված անձին մայրության նպաստ չտալը ուղղակիորեն հակասում է «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 1-ին մասի 2-րդ կետին, համաձայն որի՝ «Ազատությունից զրկված անձինք պահպանում են իրենց բոլոր այն իրավունքները, որոնցից նրանք օրինականորեն չեն զրկվել նրանց դատապարտելու կամ կալանավորելու մասին որոշմամբ»:
 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ««Փամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով արդյունավետորեն չի կարող ապահովվել պետության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ սոցիալական ոլորտում մայրությունը պաշտպանելու և հովանավորելու պոզիտիվ պարտականությունը:

Հայաստանի Հանրապետության
 փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան


Առաջարկվող նորություններ




25.10.2013 ՌԻՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



07.11.2013 ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱՆ



11.11.2013 ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ